Անցեալ տարուայ դեկտեմբերի վերջին Ազգիս Վեհ. Հայրապետի կողմից մի պատգամաւորութիւն է ուղարկուել Պ.Բուրգ, որի գլուխ է անցած Բեսարաբիայի Հայոց Թեմական առաջնորդ Բարձր Սրբազան Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեանը։

Պատգամաւորութեան պաշտօնը, ինչպէս լսում ենք, կայանում է նորանում, որ մի տեղեկագիր պիտի ներկայացնեն ներքին գործոց պ. Նախարարին Հայոց կալուածների և հայ եկեղեցական այլ խնդիրների վերաբերութեամբ և պատգամաւորութիւնը արդէն ներկայացել է նախարարին. իսկ հետևանքի մասին դեռ ևս ոչինչ յայտնի չէ։

Ներկայումս պատգամաւորութիւնը դեռ ևս գտնուում է Պ.Բուրգ, ուր կը մնայ երևի դարձեալ մի առ ժամանակ։

ՆԱՄԱԿ Ս. Պ-ԲՈՒՐԳԻՑ

Արժանապատիւ խմբագիր.

Խոնարհաբար խնդրում եմ տեղ տալ երկտողիս «ԼՈՒՄԱՑԻ» մօտակայ համարում։

Արդէն թէ հայ եւ թէ ռուս օրաթերթերում յայտարարուեցաւ, որ պ. Կարապետ Եզեանի պետական եւ ազգային յիսնամեայ գործունէութիւնը յաւերժացնելու նպատակով նորան համակրողների մէջ միտք յղացաւ ֆոնդ կազմել նորա անունով, որի նպատակը եւ գործադրութեան եղանակը պ. Եզեանի հաւանութիւնից կախուում ունի։ Շատերն այնպէս են կարծում, որ այդ ֆոնդին մասնակցելու ժամանակամիջոցը մինչեւ նոյեմբերի 6-ն էր, ուստի եւ դիմումներ են տեղի ունենում այդ առթիւ:

Սրանով յայտարարում եմ, որ ֆոնդի հանգանակութիւնը շարունակւում է։ Գումարն այժմ հասած է 4600 ռուբ.։ Այդ Ֆոնդին մասնակցել ցանկացողները կարող են ուղարկել իրանց գումարները յանուն ինժեներ Էլիկում Բաբայեանցի հետեւեալ հասցէով.

С. Петербургъ, Монетный Дворъ, Горному Инженеру
Эликуму Ивановичу Бабаянцу.

Խնդրում եմ ընդունեցէք իմ խորին յարգանքս

Է. Բաբայեան.